Այցելություն տատիկին ու պապիկին

Ալելիե Կամիտան-Կորոնել
(Հիմնված է իրական պատմության վրա:)

Այս պատմությունը տեղի է ունեցել Ինդոնեզիայում:

Էռնեստոն ևս մեկ վերնաշապիկ դրեց իր պայուսակի մեջ: Նա նայեցի իր շուրջը: Ուրիշ ի՞նչ պետք է տաներ: Նա տեսավ իր Մորմոնի Գիրքը սեղանի վրա: Նա չէր կարող մոռանալ այն:

Ամառային արձակուրդներն էին: Էռնեստոյի ընտանիքը պատրաստվում էր այցելել տատիկին ու պապիկին: Նա այնքան ուրախ էր տեսնելու իր տատիկին ու պապիկին:

Երբ Էռնեստոն և նրա ընտանիքը տեղ հասան, պապիկն ամուր գրկեց նրան: «Անչափ ուրախ եմ, որ այստեղ ես»:

«Մենք կարոտել էինք քեզ»: Տատիկը ժպտաց և նույնպես գրկեց Էռնեստոյին:

«Ես շատ երկար եմ սպասել այս օրվան: Մենք սիրով ենք այցելում ձեզ»,- ասաց Էռնեստոն:

«Եկեք ներս մտնենք»,- ասաց պապիկը: «Տատիկը կպատրաստի ձեր սիրած բոլոր կերակուրները»:

Էռնեստոն տուն մտավ տատիկի ու պապիկի հետ: Նա շատ ուրախ էր նրանց հետ ժամանակ անցկացնելու համար:

Հաջորդ առավոտ Էռնեստոն արթնացավ եփվող բրնձի բույրից: Մայրիկն ու տատիկը զբաղված էին խոհանոցում: Նա համբուրեց երկուսի այտերը: Ապա դուրս վազեց բակ:

Հայրիկն ու պապիկը դրսում նստած զրուցում էին և ինչ-որ բան էին ըմպում:

«Բարի լույս: Թեյ կուզե՞ս»: Առաջարկեց պապիկն Էռնեստոյին:

Էռնեստոն նայեց թեյի բաժակին, իսկ հետո պապիկին: Նա ցանկանում էր կիսվել Երեխաների միությունում իր սովորածով: «Ոչ, շնորհակալ եմ, պապիկ»,- ասաց նա: «Ես իմ եկեղեցում սովորեցի, որ թեյը, սուրճը և ծխախոտը օգտակար չեն մեր օրգանիզմի համար: Ես ուզում եմ հետևել այն ամենին, ինչ Հիսուսն է ուզում, որ ես անեմ»:

Հայրը ժպտաց: «Մեր ընտանիքը հնազանդվում է Իմաստության Խոսքին, բայց պապիկը այլ կերպ է հավատում, և դա նորմալ է»:

«Շնորհակալ եմ, որ կիսվում ես այն ամենով, ինչին հավատում ես»,- ասաց պապը Էռնեստոյին: «Դու լավ տղա ես: Դու կարող ես տաք ջուր խմել, ինչպես հայրդ»: Պապը Էռնեստոյի համար թեյնիկից մի բաժակ ջուր լցրեց:

Էռնեստոն մի կում խմեց: Նա ներքուստ իրեն երջանիկ զգաց ճիշտն ընտրելու համար:

Ճաշի ժամանակ Էռնեստոն հնարավորություն ունեցավ ուտելու իր սիրած կերակուրները: Տատիկը պատրաստեց *nasi goreng (նասի գորենգ)*՝ բրնձով, ձվով, մսով և բանջարեղենով ճաշատեսակ: Շատ համեղ էր: Ճաշի ընթացքում Էռնեստոն նաև սիրով զրուցեց տատիկի ու պապիկի հետ:

Կեսօրին ընտանիքը միասին պահմտոցի խաղաց: Նույնիսկ տատիկն ու պապիկը խաղացին:

«Ես քեզ տեսնում եմ ծառի հետևում, Էռնեստո»,- գոչեց հայրիկը՝ նրա ուղղությամբ վազելով: Էռնեստոն ծիծաղելով փորձեց հեռանալ: Իր ընտանիքի հետ խաղալը զվարճալի էր:

Այդ գիշեր բոլորը նստեցին պապի շուրջը, մինչ նա որոշ պատմություններ էր պատմում: Երբ պապն ավարտեց, Էռնեստոն հիշեց, որ չեն կարդացել սուրբ գրությունները:

Էռնեստոն ցանկանում էր կիսվել Երեխաների միությունում իր սովորածով:



ՆԱԿԱՐԸ՝ ՄԵՆԻՍԱՆ ՄԵՆ-ՎԻԼ ԿԱՇԻՆԱԳԻՐ

Էռնեստոն վեր թռավ տեղից: «Հիմա կգամ»:

Նա վազեց ու բերեց իր Մորմոնի Գիրքը: Երբ վերադարձավ, նա հարցրեց. «Կարո՞ղ ենք կարդալ»:

«Ուրախ եմ, որ հիշեցիք»: Մայրիկը Էռնեստոյից վերցրեց գիրքը և բացեց իր սիրելի հատվածը: Նա բարձրաձայն կարդաց այն: Ապա բոլորը ծնկի իջան:

«Կցանկանա՞ք աղոթել մեզ հետ»,- Էռնեստոն հարցրեց տատիկին ու պապիկին:

«Այո, սիրով»,- ասաց տատիկը: Նա ծնկի իջավ պապի կողքին:

Հայրիկը աղոթեց: Նա շնորհակալություն հայտնեց Երկնային Հորը, որ հնարավորություն ունեցան ժամանակ անցկացնել ընտանիքով:

Աղոթքից հետո պապը գրկեց Էռնեստոյին: «Լավ է, որ ձեր ընտանիքն աղոթում է»,- ասաց նա: «Ուրախ եմ, որ դուք ուզում եք մոտ լինել Աստծուն: Դա կօգնի ձեր ընտանիքին ամուր մնալ»:

Էռնեստոն ջերմ ու խաղաղ զգացում ունեցավ ներքուստ: Նա հաճույքով կիսվում էր իր համոզմունքներով (մի բան, որ սիրում էր) իր տատիկի ու պապիկի հետ, մարդկանց հետ, որոնց սիրում էր: ●